[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
2	Հուլիս	2019 թ.		Բ	3331508983
[4] Առաքման ամսաթիվ				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
2	Հուլիս	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	
[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 6 9 0 2 0 8 7 / 1
[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[14] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի	
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[17] Անվանումը (ֆիզիկական անձի անուն, ազգանուն)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխակատազմի գործառնական վարչություն N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[20] Լրացուցիչ տվյալներ	
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Լիազորագիր: Ամսաթիվ
[22] Մատակարարման (առաքման) եղանակը	
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնապ. հարկ	Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 18103919 բ/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անուն, ազգանուն)

Ստացող
(անուն, ազգանուն)

02/07/2019 15:07:30

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ամբուլատոր դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

« 30 » ապրիլի 2019թ.

ք. Գյումրի

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ Շ.Վ.Իկիլիկյանս, քննարկելով վարույթիս թիվ 18103919 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Տ Ի

2019 թվականի ապրիլի 12-ին՝ ժամը 19:50-ին, 20:50-ին և 20:55-ին, «Գյումրի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից ահազանգեր են ստացվել ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժին այն մասին, որ բժշկական կենտրոն բուժօգնության են դիմել Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետ փողոցի 34 շենքի 16ա բնակարանի բնակիչ, 08.11.2001թ. ծնված Վահան Լևոնի Ղազարյանը՝ «Կրծքավանդակի հետին մակերեսի կտրած ծակած վերք» ախտորոշմամբ, Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետ փողոցի 60 շենքի 36 բնակարանի բնակիչ, 19.02.2003թ. ծնված Վահագն Արմենի Ավետիսյանը՝ «Կրծքավանդակի հետին մակերեսի կտրած ծակած վերք» ախտորոշմամբ, Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետ փողոցի 30 շենքի 4 բնակարանի բնակիչ, 20.03.2003թ. ծնված Նարեկ Խաչատուրի Մսրյանը՝ «Նստատեղի կտրած ծակած վերք» ախտորոշմամբ, որտեղից վերջիններս տեղափոխվել են «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲ ընկերություն:

«Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲ ընկերությունից ստացված տեղեկանքների համաձայն՝ բուժօգնության դիմած Վահան Լևոնի Ղազարյանի մոտ ախտորոշվել է կրծքավանդակի աջ կեսի ծակած կտրած թափանցող վերք, պնևմոթորաքս աջից, մաշկային էմֆիզեմա, Վահագն Արմենի Ավետիսյանի մոտ ախտորոշվել է կրծքավանդակի ձախ կեսի ծակած-կտրած վերք, իսկ Նարեկ Խաչատուրի Մսրյանի մոտ՝ նստատեղի ձախ կեսի վերին եզրի ծակած կտրած վերք ախտորոշումը:

2019 թվականի ապրիլի 12-ին՝ ժամը 21:30-ին, ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժին ներկայացած Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետ փողոցի 9/1 շենքի 14 բնակարանի բնակիչ, 03.04.1991թ. ծնված Արթուր Արայի Կարապետյանը հայտնել է, որ 2019 թվականի ապրիլի 12-ին վիճաբանել է իրենց թաղամասի բնակիչներ՝ Ազատի, Նարեկի, Վահանի և Վահագնի հետ, որի ժամանակ դանակով հարվածել է վերջիններիս:

Դեպքի առթիվ 2019 թվականի ապրիլի 12-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 18103919 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

2019 թվականի ապրիլի 13-ին՝ ժամը 01:30-ին, Արթուր Արայի Կարապետյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու կասկածանքով ձերբակալվել է:

2019 թվականի ապրիլի 14-ին կասկածյալ Արթուր Կարապետյանի շահերի պաշտպան Ժորա Պետրոսյանը ձերբակալման իրավաչափության դեմ բողոք է ներկայացրել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան, որը նույն օրը դատարանի կողմից քննության է առնվել և որոշում է կայացվել պաշտպանի բողոքը բավարարելու և Արթուր Կարապետյանին անհապաղ ազատ արձակելու վերաբերյալ՝ նրան ազատությունից զրկելը ոչ իրավաչափ լինելու պատճառաբանությամբ:

2019 թվականի ապրիլի 14-ին որոշում է կայացվել Արթուր Արայի Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին վերջինիս առաջադրվել է մեղադրանք:

2019 թվականի ապրիլի 15-ին միջնորդություն է հարուցվել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ մեղադրյալ Արթուր Արայի Կարապետյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ:

2019 թվականի ապրիլի 16-ին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը քննության առնելով միջնորդությունը, նույն օրը որոշում է կայացրել միջնորդությունը բավարարել՝ մեղադրյալ Արթուր Արայի Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել «կալանավորումը» 2 /երկու/ ամիս ժամկետով:

Միաժամանակ դատարանը բավարարել է նաև մեղադրյալ Արթուր Կարապետյանի շահերի պաշտպան Ժորա Պետրոսյանի միջնորդությունը՝ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելը թույլատրելու մասին:

2019 թվականբի ապրիլի 16-ին մեղադրյալ Արթուր Արայի Կարապետյանը ազատվել կալանքից՝ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավը մուծված լինելու հիմքով:

Առաջադրված մեղադրանքում Արթուր Արայի Կարապետյանը դիրքորոշում չի հայտնել և օգտվելով իր դատավարական իրավունքներից հրաժարվել է ցուցմունք տալ և որևէ հարցերի պատասխանել:

2019 թվականի ապրիլի 13-ին Շիրակի մարզային քննչական վարչություն է ստացվել Արթուր Կարապետյանի հոր՝ Արա Կարապետյանի դիմումը և կից ներկայացված ՀՀ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի 20.10.2009 թվականի թիվ 1833 որոշումը, հիվանդության վկայագիրը և տեղեկանքը, համաձայն որոնց՝ Արթուր Կարապետյանի մոտ ախտորոշվել է սուր պոլիմորֆ պսիխոզ հիվանդությունը, որով էլ վերջինս ճանաչվել է ոչ պիտանի ծառայության համար:

Ստուգմամբ պարզվել է, որ Արթուր Արայի Կարապետյանը 2015 թվականի դեկտեմբերի 18-ից «Անձի բշիզոտիպային խանգարում» ախտորոշմամբ հաշվառման մեջ է գտնվում «Գյումրի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության հոգեբուժական ծառայությունում:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբանության և դատական հոգեբուժության բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246-րդ, 248-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 18103919 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետներին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Փորձագետների պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը՝

- Հանցավոր արարքը կատարելու պահին մեղադրյալ Արթուր Արայի Կարապետյանը գտնվել է արդյոք հոգեկան խիստ հուզմունքի /ֆիզիոլոգիական աֆեկտի/ վիճակում, թե ոչ:
- Հանցավոր արարքը կատարելու պահին Արթուր Կարապետյանը գտնվել է արդյոք

Ստեղծագործյալ Արթուր Կարապետյանը նախկինում և հանրորեն վտանգավոր արարք կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ է տառապել և երբվանից:

- Եթե Արթուր Կարապետյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկել է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

- Արթուր Կարապետյանը ներկայումս տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա՝ ինչպիսի:

- Եթե Արթուր Կարապետյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկում է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

- Արթուր Կարապետյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:

- Արթուր Կարապետյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում և հակացուցված չէ արդյոք բուժումը:

3. Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան այլ հարցեր, որոնք որոշմամբ չեն առաջադրվել, սակայն դրանց պատասխանը մտնում է փորձագետների իրավասության մեջ ու դրանց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության համար՝ խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

4. Միջնորդության դեպքում փորձաքննությանը ներկայացնել Արթուր Կարապետյանին, տրամադրել քրեական գործի նյութերը և Արթուր Կարապետյանին վերաբերյալ ամբողջատոր քարտը:

ՀԿԳ ավագ քննիչ՝ **Շ.Իկիլիկյան**